

ՕՐԵՆԱԴԻՐ

ՎԵՐՋԱՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԿՍԵՑ ԼԻԱՐԺԵՔ ԳՈՐԾԵԼ

ՎԱՍԱԲԵՐ ԿՈՒՃԱՎԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 12-ՐԴ ՆԱԽԱՊԱՀ

Ապրիլի 24-ին, ընդդիմության 17 պատգամավորների մասնակցությամբ, Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ լիարժեք աշխատանքին: Նախօրեին խորհրդարանի նախագահ Արչիլ Թալալվաձեն հայտարարեց օրենսդիր մարմնի ղեկավարի պաշտոնից հրաժարվելու եւ փոխխոսնակի կարգավիճակում գործունեությունը շարունակելու մտադրության մասին: Խորհրդարանում «Վրացական երազանքի» խորհրդարանական մեծամասնությունը նախագահի պաշտոնում ներկայացրեց փոխխոսնակ Կախաբեր Կուճավայի թեկնածությունը: Լիազումար միստում՝ 86 կողմ, 6 դեմ ձայներով, Կախա Կուճավան ընտրվեց խորհրդարանի նախագահ:

Այսպիսով, 2020 թվականի հոկտեմբեր ամսվա ընտրություններից գրեթե վեց ամիս անց, Վրաստանի խորհրդարանը, վերջապես, մասնակիորեն ձեռնամուխ եղավ օրենսդրական գործունեության կատարմանը: Նշենք, որ 10-րդ գումարման խորհրդարանում ներկա դրությամբ գործում են (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԳՈՐԾԱՐԿԿԻ 15 ՀԱԶԱՐ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ 500 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ԾՐԱԳԻՐԸ

Ապրիլի 26-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական միստը: Իրակլի Դարիբաշվիլին ներկայացրեց երկրի 63 մունիցիպալիտետում իրականացվելիք քաղաքաշինական 500 միլիոնանոց ծրագիրը, որն, ըստ վարչապետի, ապահովելու է շուրջ 15 հազար նոր աշխատատեղերի ստեղծում:

- Ես ուզում եմ այսօր կառավարության միստին նոր նախաձեռնություն ներկայացնել: Մենք սկսում ենք ողջ երկրի տարածքով նորացում: Այս ծրագիրը ներառում է 63 քաղաքապետարանում քաղաքաշինության վերականգնում, կարելու է մշակութային եւ պատմական ժառանգության օբյեկտների վերականգնում, քաղաքապետարաններում վարչական կենտրոնների վերականգնում, ինչպես նաեւ հանգստի տարածքների ստեղծում, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՆԱԿ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԻՆ

Ապրիլի 29-ին Վրաստանը նշեց երկրի Զինված ուժերի կազմավորման 30-րդ տարին: Թբիլիսիի մոտակայքում գտնվող Վազիանիի ռազմակայանում անցկացվեց հանդիսավոր արարողություն՝

մվիված հոբելյանին: Արարողությանը ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Ե

ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻՆ ՄԻՎՅՅՈՒՄՈՂ ԹԵՐԹ
Ինձ համար մեծ պատիվ է Վրաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի անունից շնորհավորել Վրաստանի նշանակալի պարբերականներից մեկի հայալեզու «Վրաստան» թերթի 100-ամյա հոբելյանը: 1920 թվականից, այսինքն՝ հիմնադրման օրվանից այս թերթը Վրաստանի կյանքի, նրա էկոնոմիկայի, մշակույթի եւ սոցիալական կեցության մատենագիրն է: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԻ, «ՎՐԱՍՏԱՆ»
Սիրելի Վան, թանկագին «վրաստանցիներ» եւ իհարկե թերթի ընթերցողներ, անկեղծ սրտով ողջունում եմ դեռ մանկուց շատ սիրելի մեր «Վրաստան» թերթի մեկդարյա հոբելյանը: Բնիկ ախալցխեցուս համար «Վրաստանը» այն ամենապահանջված պարբերականն էր, որի յուրաքանչյուր նոր համարը մեր «օդային» քննարկումների մի ողջ ալիք էր բարձրացնում, առավել եւս, եթե թերթի էջերում լուսաբանվում էին մեր շրջանին, (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - 106

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ապրիլի 24-ին Հայաստանի աշխարհիկ եւ հոգևոր բարձրագույն ղեկավարությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, ՀՀ օստիկանապետ Վահե Ղազարյանը, ՀՀ ԱԾ տնօրեն Արմեն Աբազյանը, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Արա Այվազյանը եւ կառավարության այլ անդամներ: Հայաստանի վարչապետին, Հայաստանի նախագահին եւ ԱԾ նախագահին ուղեկցում էին նրանց



կանայք: Նրանք ծաղիկներ խոնարհեցին Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հանդիսապետությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր դասի մասնակցությամբ, կայացավ բարեխոսական կարգ: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՂԵՐԻՆ ՆՎԻՎԱԾ ԲԱՐԵՒՄԱԿԱՆ ԿԱՐԳ՝ ԹԲԻԼԻՍԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՎԵՂԵՉՈՒՄ

2021 թվականի ապրիլի 24-ին, ի հիշատակ Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Ղալթյանի հանդիսապետությամբ անցկացվեց բարեխոսական կարգ:



Եկեղեցական արարողությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրջյանը, Ախալքալաքի փոխքաղաքապետ Արմեն Մարանգոյանը, դիվանագետներ, համայնքային կառույցների ղեկավարներ, մտավորականներ, թբիլիսահայ հասարակայնության անդամներ: Ներկաները մոմեր վառեցին սուրբ նահատակների հիշատակին: Իսկ թեմի «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի սաները ձայնակցեցին Սուրբ խորանից հնչող «Տերունական աղոթքին»: Խոնարհվելով Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն սրբադասված նահատակների հիշատակին՝ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԶՈ ԲԱՅՐԵՆ. «ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԲՈՒՈՐ ՆՐԱՆՅ, ՈՎՔԵՐ ԶՈՂՎԵԼ ԵՆ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ»

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑԱԿ ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎԻՆ, ՈՎՔԵՐ ԸՆԱՆՁԵԼ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 24-ին Սպիտակ տունը տարածեց Օսմանյան կայսրությունում 1915-1923 թվականին գործած հայերի զանգվածային ջարդերի հիշատակի օրվա կապակցությամբ ԱՄՆ-ի նախագահ Զո Բայդենի հայտարարությունը:

- Ամեն տարի այս օրը մենք հիշում ենք նրանց, ովքեր զոհվեցին Օսմանյան ժամանակաշրջանի Հայոց ցեղասպանության ժամանակ, եւ պարտավորվում ենք կանխել նման չարագործությունների կրկնությունը: Սկսած 1915 թվականի ապրիլի 24-ից՝ օսմանյան իշխանությունների կողմից Կոստանդնուպոլսի հայ մտավորականության եւ համայնքի առաջնորդների ձերբակալություններից հետո, մեկուկես միլիոն հայեր տեղահանվեցին, կոտորվեցին կամ մահվան ուղարկվեցին՝ բնաջնջման նպատակով: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)



(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍԱՆ - ԼԻՏՎԱ

ԸՆԴՊՇՎԵՑ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵՐՄԱՆ ԿՈՒՐՍԻ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 28-ին պաշտոնական այցով Թբիլիսիում եր գտնվում Լիտվայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսը:



պատրաստակամությունը:

Այցի շրջանակներում, լիտվացի հյուրի հետ հանդիպումներ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, Վրաստանի արտգործնախարար Դավիթ Ջավակախանին:

ինտեգրման գործընթացը, երկկողմ էլ բազմակողմ համագործակցության հեռանկարները:

Հանդիպումներում Գաբրիելիուս Լանդսբերգիսը կրկին ընդգծեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության, ինչպես նաեւ Եվրատարածքում ինտեգրման հարցում Վրաստանին լիարժեք աջակցության

ԳՈՐԾԱՐԻՐ

ԿՈՐՄԱՐԿՎԻ 15 ՀԱԶԱՐ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ 500 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ԾՐԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանգստի այգիներում: Բոլոր քաղաքապետարաններում կառուցվելու են հասարակական օբյեկտների վերակառուցում եւ կառուցում: Ինչպես նաեւ բոլոր քաղաքների, բոլոր հանգստավայրերի եւ բնակավայրերի քաղաքային նորոգում: Ծրագրի շրջանակներում, կատարվեն նաեւ նոր հանգստի, զբոսաշրջային եւ հասարակական գոտիներ: Ինչպես գիտեք, Վրաստանում կան շատ վայրեր, որոնք մենք պետք է էլ ավելի

գրավիչ դարձնենք, առաջին հերթին մեր քաղաքացիների, միաժամանակ, մեր երկրի հյուրերի, զբոսաշրջիկների համար: Շատ կարեւոր է երկրի մարզերի հավասար զարգացումն ու խթանումը,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին ու հավելեց, որ մարզերի նորացման առաջին փուլի արժեքը 500 միլիոն լարի է: Ծրագիրը ֆինանսավորվելու է պետական բյուջեից, ինչպես նաեւ իրականացվելու է միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ:

- Ծրագիրը ֆինանսավորվում է 500 միլիոն լարիի չափով, ֆինանսավորվելու է պետական բյուջեից, ինչպես նաեւ միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ: Ծրագիրն ու նախագիծը կներառեն բոլոր լավագույն ճարտարապետներին՝ բոլոր քաղաքապետարաններից եւ մարզերից: Կարծում ենք, որ սա հզոր սկիզբ կլինի մեր երկրի լիարժեք վերակառուցման համար: Մենք պետք է հնարավորինս հավասարաչափ հաս-

տատենք նոր ստանդարտ բոլոր քաղաքապետարաններում, նոր եվրոպական ստանդարտ, որը կփոխի մեր երկրի ընդհանուր պատկերը: Մեզ անհրաժեշտ է առավելագույն մոբիլիզացում ավելի շատ աշխատանք, ավելի շատ աշխատուժ՝ մեր բնակչության կողքին կանգնելու եւ օգնելու համար,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

Վարչապետի խոսքով, մրցույթները կհայտարարվեն այս շաբաթ, իսկ ծրագրերի իրականացումը կսկսվի հունիսին:

COVID - 19

ՉԵՂԱՐԿՎՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐ՝ ՈՒՂՈՎՓՈՒ ԵՎԵՂԵՑՈՒ ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ապրիլի 26-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որը քննարկեց երկրում համավարակային իրավիճակը, ծրագրեց Ուղղափառ եկեղեցու Զատական տոների օրերին իրականացվելիք միջոցառումների հարցը:

Խորհուրդը քննարկեց վարակների աճի դինամիկան, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ՝ Վրաստանում: Նշ-

վեց, որ վարակման դեպքերի հետ հուսալից անհամարժեք մակարդակն աճում է: Հետեւաբար, վարչապետի հանձնա-

րարությամբ, առողջապահության նախարարությունը մշակել է լրացուցիչ մահճակալային ֆունկցիոնալ մահճակալների, թթվածնի ու թեստերի պաշարների կառավարման ծրագիրը՝ նշելով, որ նույնիսկ վատագույն սցենարի դեպքում համակարգը պատրաստ է եւ կառավարությունը լիովին վերահսկում է իրավիճակը:

(Հարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - 106

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՇԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՐԵՏՈՍԱԿԱՆ ԿԱՐԳ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ԵՎԵՂԵՑՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայր Սուրբը թբիլիսահայությանը սիրո եւ միասնության կոչ արեց, հորդորեց, դասեր քաղելով Մեծ Եղեռնի ու ոչ հեռավոր դեպքերից, բռնություն, ազգի եւ ժողովրդի, այլ անենուրեք հպարտությամբ կրել հայի անունը: Հավարտ բարեխոսական կարգի, ներկաները ծաղիկներ խոնարհեցին եկեղեցու բակում

կանգնեցված Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի խաչքարի մոտ: Ապրիլի 24-ին հիշատակի պատարագներ եւ բարեխոսական կարգ կատարվեց Վիրահայոց թեմի տարբեր եկեղեցիներում, բողոքի ակցիաներ, քայլերթեր եւ խաղաղ հանրահավաքներ տեղի ունեցան Թբիլիսիում, Վրաստանի հայաբնակ քաղաքներում եւ շրջաններում:



ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ 106 ՕԴԱՊԱՐԻԿՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ, ԶԱՀԵՐՈՎ ԵՐԹ ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ, ԱՆԱԼՑԻՆԵՈՒՄ...

Ապրիլի 23-24-ը, ավանդույթի համաձայն, Թբիլիսիում, Ախալքալաքիում եւ Ախալցխիսում կայացան Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ:


Ապրիլի 23-ին, մայրաքաղաքի Մետրոշինարարների թաղամասում հայկական հասարակական կազմակերպությունների կողմից երկինք բարձրացվեցին խորհրդանշական լույսերով 106 օդապարիկներ: Հաջորդ օրը, Վրաստանում Թուրքիայի դեսպանատան մոտ, թբիլիսահայերի մասնակցությամբ անցկացվեց բողոքի ցույց Թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության դեմ:



Ախալքալաքիում եւ Ախալցխիսում եւս անցկացվեցին Ցեղասպանությանը նվիրված հիշատակի մի-



ջոցառումներ: Ձահերով ու դրոշմներով երթերն անցան, համավարակի կանխարգելման բոլոր հանձնարարականների պահպանմամբ:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐ՝ BREXIT-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԽԱՆՏԱՆ ԴԵՊՈՒՄ

Եվրամիության երկրները Լոնդոնի նկատմամբ կդիմեն պատժամիջոցների Brexit-ից հետո նրա կողմից առեւտրական համաձայնագրի չկատարման դեպքում:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը կից պետքարտուղար Կլեման Բոնի խոսքով, «ներգործության միջոցները կարող են կիրառվել այն պարտավորությունների չկատարման դեպքում, որոնք վերաբերում են Հյուսիսային Իռլանդիային եւ ձկնորսության բնագավառի իրավունքներին»:

ՌՈՒՍԱՍԱՆ

ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ «ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ»

Ռուսաստանը մինչեւ մայիսի վերջը կավարտի «Բաց երկնքի պայմանագրից» (ԲԵՊ) դուրս գալու ընթացակարգերը՝ պահպանելով ստատուս-քվոն: ՌԴ կառավարությունը ԲԵՊ-ի դեմոնստրացիայի մասին օրինագիծ կներկայացնի նախագահին, իսկ հետո փաստաթուղթը կներկայացվի Դաշնային ժողովի քննարկմանը:

Հիշեցնենք, որ Բաց երկնքի պայմանագիրը (ԲԵՊ, The Treaty on Open Skies) ստորագրվել է 1992 թվականի մարտի 24-ին Չեխիայի կողմից, Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) 23 անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից: Ռուսաստանը պայմանագիրը վավերացրել է 2001 թվականի մայիսի 26-ին: Ներկայում դրան մասնակից է 34 երկիր: Նրանք կարող են միմյանց տարածքների շուրջ թռիչքներ կատարել ռազմական գործունեությունը վերահսկելու նպատակով: 2020 թվականի նոյեմբերին ԱՄՆ-ը դուրս է եկել ԲԵՊ-ից:

ՈՒԿՐԱԻՆԱ

ՍԱՀՄԱՆՑ ԶՈՐՔԵՐՆԸ ՀԵՌԱՑՎՈՒՄ ԵՆ

Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգու Վրաստանի 22-ին հայտարարեց Հարավային եւ Արեւմտյան ռազմական օկուպացիայի գործերի ստուգումն ավարտելու մասին: Նա հրամանատարներին առաջադրանք է տվել ապրիլի 23-ից ձեռնամուխ լինել գործերի վերադարձին իրենց մշտական տեղաբաշխման կետեր: Սահմանից գործերի հետքաշումը հաստատել է նաեւ Պենտագոնը: Վաշինգտոնի տվյալներով, ՌԴ-ն իսկապես արդեն գործերի մի մասը հեռացրել է սահմանից: Հենց նույն օրը Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին ողջունեց Դոնբասում ռազմական ներկայությունը նվազեցնելու եւ իրադրությունն ապաստանելու քայլերը:

ԿՈՒՐԱ

ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԵՂԱՎ ՈՒՈՒԼ ԿԱՍՏՐՈՆ

Ապրիլի 16-ին Կուբայի կոմկուսի Կենտրոնի առաջին քարտուղար, 89-ամյա Ռաուլ Կաստրոն կուսակցության 8-րդ համագումարում հայտարարեց, որ մտադիր է թողնել զբաղեցրած պաշտոնը:

Հիշեցնենք, որ այդ հայտարարությունը յուրովի դառնում է Ֆիդել եւ Ռաուլ Կաստրո եղբայրների կողմից Կուբայի կառավարման 62-ամյա պատմության ավարտը:

Ռաուլ Կաստրոն պետության գլուխ կանգնեց 2008 թվականին, Ֆիդել Կաստրոյի հրաժարականից հետո:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲԱՆԱԿ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրանք հորեյլանի առիթով շնորհավորեցին զինծառայողներին, զինված ուժերի վետերաններին, հարգանքի տուրք մատուցեցին հայրենիքի անկախության համար զոհվածների հիշատակին:

- Այս 30 տարիները վրացական բանակի կազմավորման, նրա ազգային շահերի, ազգային արժանապատվության, երկրի անկախության, տարածքային ամբողջականության եւ ազատության համար պայքարի դժվար տարիներ էին: Դա պայքար էր մեր արեւմտյան, եվրոպական ընտրության

արժանապատիվ ապագայի համար, ուստի վճարումն ահռելի էր: Կորսվեցին կյանքեր, առողջություն, որբացան ընտանիքներ: Մենք խոնարհվում ենք զոհերի առջեւ, հարգում ենք նրանց հիշատակը: ասաց Սալոմե Ջուրաբիշվիլին:

- Ես կցանկանայի ընդգծել մեր զորքերի դերը երկրի եվրախիտեզրման գործում եւ ձեր արժանի մասնակցությունը ԱՖղանստանում ՆԱՏՕ-ի առաքելությանը, որն ավարտվում է սեպտեմբերին: Այս առաքելության ընթացքում վրացի



զինվորներն ապացուցեցին, որ վրացական ռազմական ոգին եւ Վրաստանի համար ձեռք բերել հուսալի եւ վստահելի գործընկերոջ անուն՝ ան-

բողջ աշխարհում: Մենք հպարտ կլքենք առաքելությունը ԱՖղանստանում եւ ապագայում եւս կշարունակենք ապահովել միջազգային խաղաղություն գոյություն ունեցող ձեռնարկներում: Նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի Պաշտպանության բանակի կազմավորման 30-ամյակին նվիրված արարողությանը ներկա էին Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների անդամներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Ներկաների թվում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓՈՒԵԿԵՂԵՑԻՆ ՆՇՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԸ



Մայիսի 2-ին Ուղղափառ աշխարհը, այդ թվում՝ Վրաց Ուղղափառ եկեղեցին, նշում է Սուրբ Զատիկը: Տոնի առիթով, Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը կմատուցի Սուրբ եւ Ամնահ պատարագ:

ՍՈՑԻԱԼԱԿՈՒՄ

2020-ԻՆ ԲՎՎԱՐԱՐՎԵԼ Ե ԲԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ 8 ՀԱԶԱՐ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ 18 ՀԱԶԱՐ ԴԻՄՈՒՄ



Վրաստանի պետական անվտանգության ծառայության տարածած տեղեկատվության համաձայն, 2020 թվականին Վրաստանի ՊԱԾ-ը դրական առաջարկություն է տվել Վրաստանի քաղաքացիություն շնորհելու շուրջ 8 հազար դիմումների եւ շուրջ 18 հազար տարատեսակ կացության թույլտվությունների դիմումների կապակցությամբ:

Վրաստանի Պետական անվտանգության ծառայության ղեկավարի առաջին տեղակալ Վախթանգ Բաթիաշվիլու խոսքով, հաշվի առնելով պետական անվտանգության շահերը, բացասական պատասխան է տրվել քաղաքացիություն ստանալու ավելի քան 200, իսկ կացության թույլտվություն ստանալու շուրջ 2,4 հազար դիմումների կապակցությամբ:

Ինչպես նշեց Վախթանգ Բաթիաշվիլին, գերատեսչությունը հատուկ ուշադրություն էր դարձնում միգրացիոն ալիքների դիտարկմանը: Անցած մեկ տարվա գործունեության արդյունքում, Պետական անվտանգության ծառայությունը բացահայտել է մի շարք անձանց, ովքեր փորձել են ապօրինի մուտք գործել Վրաստան եւ ձեռք բերել տարբեր տեսակի կացության թույլտվություններ:

Բացահայտվել են նաեւ նրանց աջակցող կազմակերպություններն ու անհատները: Այս փաստերին արձագանքելու նպատակով, Պետական անվտանգության ծառայությունը համակարգված աշխատել է ինչպես արդարադատության նախարարության, այնպես էլ՝ Վրաստանի ՆԳ նախարարության եւ տարբեր պետական մարմինների հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԶՈՐՍ ԱՄՍՎԱ ԶԵՂԸ ԿԱԶՄԵՑ 121 725 ԼԱՐԻ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը էլեկտրաէներգիայի, բնական գազի եւ խմելու ջրի վճարումների հարցում սպառողներին տրամադրեց 121 725 լարիի զեղծ:

Ինչպես տեղեկացրին հանձնաժողովում, ընդլայնված նիստում քննարկվեցին քաղաքացիների եւ էլեկտրաէներգիայի, բնական գազի, խմելու ջրի, կոմունալ սպասարկման ընկերությունների միջեւ առկա վեճերը:

Ինչպես նշված է գերատեսչության տարածած հաղորդագրության մեջ, հանձնաժողովը 2021 թվականի հունվարից մինչ օրս անցկացրել է 19 ընդլայնված նիստ, որտեղ քննարկվել է 146 հարց: Քննարկված հարցերն առնչվել են քաղաքացիների եւ կոմունալ սպասարկում ներկայացնող ընկերությունների միջեւ առկա վեճերին: Հարցերի մեծ մասը լուծվել է սպառողների օգտին: Միաժամանակ, հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն, վերջին չորս ամսվա ընթացքում, քաղաքացիների օգտին զեղ-



չվել է, ընդհանուր առմամբ, 121 725 լարիի գումար: Հանձնաժողովը քննարկել է քաղաքացիների դիմումները, որոնք վերաբերում էին սպասարկում մատուցող ընկերությունների կողմից անհիմն գրանցված գումարներին, ժամկետանց պարտքերին, բաշխման ցանցերի միացման ընթացակարգերին եւ ժամկետներին: Հանձնաժողովը էլեկտրաէներգիայի, բնական գազի եւ խմելու ջրի սպառողներին հիշեցնում է, որ եթե վավերացվում է կոմունալ սպասարկում ներկայացնող ընկերությունների կողմից իրավունքների խախտում, անմիջապես դիմեն հանձնաժողովին կամ հանձնաժողովին առընթեր գործող ծառայություններին: Խորհրդատվությունների համար կարելի է զանգահարել 16216 հեռախոսահամարին, ինչպես նաեւ դիմել հանձնաժողովի ֆեյսբուքյան էջին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱՆՐ ԽՈՒՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎՈՒՄ ԵՆ, ՓՈՒՏՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ



«Վարչական իրավախախտումների մասին» օճեսզրքում կիրականացվեն փոփոխություններ, ըստ որի, մամր խուլիգանությունը կրկնելու համար տուգանքները կրկնապատկվում են, եւ փոխվում են վարչական կալանքի ու դատարան ներկայացնելու ժամկետները:

Ըստ փոփոխությունների, մամր խուլիգանությունը՝ համարյաին վայրերում հայրույթները, քաղաքացիների վրա հարձակումը եւ քաղաքացիների անդորրը խախտող այլ գործողություններ, կհանգեցնեն տուգանքի՝ 500-1000 լարիի չափով կամ վարչական կալանքի՝ մինչեւ 15 օր ժամկետով:

Բացի այդ, օրինագծով կոնկրետացվում է, որ այս հոդվածով նախատեսված

վարչական իրավախախտում կատարելու համար նույն հոդվածով սահմանված վարչական իրավախախտում կատարելը կհանգեցնեն 1500-2000 լարի տուգանքի կամ վարչական կալանքի՝ 7-15 օր ժամկետով: Օրինագիծը նախատեսում է, որ տվյալ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար, անձը զրկվելու է զենք կրելու իրավունքից մինչեւ երեք տարի ժամկետով: Օրինագծում

նշվում է, որ այս հոդվածով բացահայտվեց վարչական իրավախախտումների 4 452 դեպք 2018, 5 175 դեպք՝ 2019 եւ 3 452-ը՝ 2020 թվականներին:

Ինչ վերաբերում է վարչական կալանքի եւ դատարանին ներկայացնելու ժամկետներին, ապա օրինագծի պատրաստումը կապված է Սահմանադրական դատարանի որոշման կատարման հետ: Փոփոխություններով նախատեսվում է, որ վարչական կալանքի ընթացքում ձերբակալվածը հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, կհանձնվի դատարանին:

Եթե կալանավորված անձն այս ընթացքում դատարանին չհանձնվի, նա անհապաղ ազատ է արձակվում, նախքան դատարան բերվելը՝ լիազորված մարմինը

կարող է նրան պահել կալանքի տակ ժամանակավոր մեկուսարանում:

Օրինագծի նախաձեռնողները բացատրում են, որ նշված օրենսդրական փոփոխությունը ապահովում է անձի ձերբակալման եւ դատարան ներկայացնելու նույն ժամկետը, ուստի, հավասար վերաբերմունքը՝ ՄԴ որոշմամբ սահմանված անձանց խմբերի նկատմամբ:

Օրինանախագծի նախաձեռնողներն են պատգամավորներ Անրի Օխանաշվիլին, Դավիթ Մաթիկաշվիլին, Ալեքսանդր Տաբատաձեն, Ռատի Իոնաթամիշվիլին, Գիորգի Ամիլխավարին, Ալուդա Դուրուշատուրին, Գուրամ Մաճարաշվիլին եւ Կախա Կախիշվիլին:

ՕՐԵՆԱԴԻՐ

ՎԵՐՉԱՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԿՍԵՅՆ ԼԻԱՐԺԵՔ ԳՈՐԾԵԼ

(Սկզբը 1-ին էջում)

«Վրացական երազանք», «Լեւոն», «Գիրչի», «Գիրչի՝ ավելի շատ ազատություն», «Ռեզնավարությունը՝ շինարար», «Քաղաքացիներ», «Հանրապետականներ» կուսակցություններից ընտրված պատգամավորները, ինչպես նաև Եվրախորհրդի նախագահի վերոնշյալ փաստաթուղթը որպես անհատ պատգամավոր, վավերացրած երկու պատգամավորները, ընդհանուր առմամբ՝ 107 պատգամավոր:

Այսօրվա դրությամբ, խորհրդարանում պատգամավորական մանդատներից օգտվում են «Վրացական երազանքի»՝ 90, «Ռեզնավարությունը՝ շինարար» կուսակցության՝ 3, «Լեւոն» կուսակցության՝ 4, Իսախանյանի «Գիրչի» կուսակցության՝ 3, «Քաղաքացիներ» կուսակցության՝ 2, Զուրաբ Ջափարիձեի «Գիրչի» ավելի

լի շատ ազատություն» կուսակցության 1, «Հանրապետական» կուսակցության («Միասնական ազգային շարժման» ցուցակով անցած) 2, «Եվրոպական սոցիալիստներ» կուսակցության («Հայրենասերների ալյանսի» ցուցակով անցած)՝ 2, ինչպես նաև «Եվրոպական Վրաստան» կուսակցությունից անհատական 3 եւ «Միասնական ազգային շարժում» կուսակցությունից՝ 1 պատգամավոր:

Ինչպես նշեցինք, ապրիլի 24-ին Վրաստանի խորհրդարանը, ընդդիմության որոշ հատվածի մասնակցությամբ իր առաջին լիարժեք նիստում օրենսդիր մարմնի ղեկավարի պաշտոնում ընտրեց Կախա Կուճավային: Այս օրենսդիրները ձեռնամուխ եղան համաներման օրինագծի քննարկմանը: Նշենք, որ վերոնշյալ նախագիծը քննարկման է ներկայացվել երկու տարբերակով,

ինչպես կառավարող կուսակցության, այնպես էլ միացյալ ընդդիմության պատգամավորների կողմից: Երկու օրինականագծերի միջև երկու տարբերություն է նախանշյալ տարվա հունիսի 20-ի (գովիլովյան գիշերվա) դեպքերի կապակցությամբ ներկայումս կալանքի տակ գտնվող Նիկա Մելիայի, այդ գործով ձերբակալված քաղաքացիական մյուս անձանց, ինչպես նաև իրենց լիազորությունները գերազանցած ոստիկանների ներման հարցում տարածայնությամբ: Եթե «Վրացական երազանքի» նախագիծը նախատեսում է համաներման բոլորին, ապա ընդդիմության օրինագծում ձերբակալված ոստիկանների ներման հարցն ուղղակիորեն կապվում է ցույցի ցրման արդյունքում տուժածների դիրքորոշմանը: Օրինագծերի քննարկումը շարունակվում է:

ԿԱԽԱՔԵՐ ԿՈՒՃԱՎԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ

Ապրիլի 24-ին Վրաստանի խորհրդարանը՝ 86 կողմ եւ 6 դեմ ձայներով, Վրաստանի խորհրդարանի նախագահ ընտրեց «Վրացական երազանք» խորհրդարանական մեծամասնության անդամ, խորհրդարանի փոխստանակ Կախաբեր Կուճավային:



Կախաբեր Կուճավան 42 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ Անգլիայի Նոտինգեյմ Տրենտի համալսարանի կորպորացիոն իրավունքի մագիստրի աստիճանով:

Կախաբեր Կուճավան տարբեր տարիներին իրավախորհրդատուի պաշտոնում աշխատել է միջազգային մի շարք տարբեր ուղղությունների ընկերություններում, ինչպես նաև միջազգային եւ տեղի հասարակական կազմակերպություններում, եղել է աշխարհում խոշորագույն «Միջազգային առեւտրական պալատ» բիզնես-կազմակերպության տնօրենների խորհրդի անդամ:

Կախաբեր Կուճավան եղել է Վրաստանի խորհրդարանի 9-րդ գումարման պատգամավոր, աշխատել է բնապահպանության եւ բնական ռեսուրսների

խորհրդարանական կոմիտեի նախագահ, ավելի ուշ զբաղեցրել է խորհրդարանի փոխստանակի պաշտոնը: 2020 թվականի հոկտեմբերի ընտրություններից հետո, «Վրացական երազանքի» ցուցակով ընտրվել է 20-րդ գումարման խորհրդարանի անդամ, եղել է կուսակցության քվտայով խորհրդարանի փոխստանակ:

Մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է, միջազգային ֆինանսական «Կորպորատիվ կառավարում» ամսագրի հրատարակչական խորհրդի անդամ:

ՆԿԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԻՎԿՈՉ՝ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԵՐԸ ԹՔԻԼԻՍԱՆՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

«Վրաստան» թերթը հաղորդել էր, որ Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը՝ տիկնոջ՝ Նունե Սարգսյանի եւ Հայաստանի պատվիրակության հետ, ապրիլի 15-16-ը պաշտոնական այցով գտնվում էր Թբիլիսիում: Այցի շրջանակներում, բարձրաստիճան հյուրերը եղան Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում, որտեղ հանդիպեցին նաև մայրաքաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Նախքան պատվիրակության ժամանումը Թբիլիսիի «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը տիկնոջ Նունե Սարգսյանին խնդրել էր թբիլիսահայությանը նվիրաբերել իր հեղինակած գրքերից մի քանիսը: Նախագահի տիկնոջ դատարկածնում չէր ժամանել: Նա «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանին փոխանցեց «Վրաստան» թերթի ու «Արեւիկ» մանկապատանեկան ամսաթերթի խմբագրություններին եւ մայրաքաղաքի թիվ 104, թիվ 103 դպրոցների գրադարաններին նվիրվող իր մանկական գրքերը:



Նունե Սարգսյանի «Կախաբերական կոճակներ», «Կափիղկա», «Դավիթ, Հայկ եւ Բագիլիսկուս», «Կապույտ գետածուկի եւ վարդագույն մկնիկի արկածները», «Թզուկ Սզուկը» հեքիաթների ու պատմվածքների շքեղագարդ ժողովածուները Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում, տնօրեն Իրինա Ժամկոչյանի, գրադարանավարուհի Հասմիկ Անտոնյանի եւ 1-5-րդ դասարանի աշակերտների ներկայությամբ, հանձնվեցին կրթօջախի գրադարանին:

Տիկնոջ Նունեի հայտնի արվեստաբան, մանկագիր է, ծնվել է 1954 թվականին, Երևանում, ծագումով թբիլիսցի հայտնի մտավորականների ընտանիքում: Առաջին տիկնոջ հայրը՝ արձակագիր, լրագրող, թարգմանիչ Անուշավան Բաբայանը, երկար տարիներ եղել է Երևանի «Գրքերի աշխարհ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը, իսկ մայրը՝ Շոդակաթ Կուզիկյանը, ծնունդով Ախալցխայի քաղաքից է, ում ծնողները գաղ-

թել էին Երզրումից: Աշխատել է որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի: Նունե Սարգսյանի հորական պապը՝ Անդրանիկ Քանթանյանը, ժամանակին գաղթել էր Վանից եւ բնակություն հաստատել Թբիլիսիում: Նա զբաղվել է տարբեր աշխատանքներով, այդ թվում՝ աշխատել է տեղի գիմնազիայում՝ որպես ուսուցիչ, իսկ մինչև 1962 թվականը եղել է «Վրաստան» թերթի խմբագրության թարգմանության ծառայության ղեկավարը: Տիկնոջ Նունեի հայրն ու հորեղբայրը՝ Անուշավանն ու Սուրենը, ավարտել են Թբիլիսիի 5-րդ արական դպրոցը, որը գտնվում էր Էնգելսի (այժմ Ասաթիանի) փողոցի վերջում, որտեղ ժամանակին սովորել են նաև Վիկտոր Համբարձումյանն ու Տիգրան Պետրոսյանը:

Նունե Սարգսյանը հեղինակ է երկու տասնյակից ավելի հայերեն, ռուսերեն եւ անգլերեն մանկական գրքերի: Տիկնոջ Նունեի գրքերը թարգմանվել են վրացերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն եւ ուզբեկերեն: Նա հեքիաթները տպագրվել են ինչպես արելեւտահայերենով, նույնպես եւ արելեւտահայերենով, նաև Արցախի, Գավառի, Գյումրու բարբառներով: Տիկնոջ Նունեի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից նշանակվել է երեխաների իրավունքների արտակարգ պաշտպան:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՎՅՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱԶԱԿՑՈՒՄ Ե ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՎՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Վրաստանի խորհրդարանում անցկացվեց «Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժման առընթեր ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհրդի անդամների հանդիպումը Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ Ավթանդիլ Ենուքիձեի հետ:

23 տարի առաջ ստեղծված խորհուրդը, որը միավորում է Վրաստանում ապրող 19 համայնքների 56 ոչ կառավարական կազմակերպությունները, առաջին ոչ կառավարական կազմակերպությունն էր երկրում, որը սկսեց զբաղվել ազգամիջյան հարաբերությունների երկրի հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների ինտեգրման հարցերով: Խորհրդի կազմում ընդգրկված են Էկոնոմիկայի նախկին փոխնախարարը, երկրի նախագահի խորհրդականը, խորհրդարանի անդամներ, շրջանային վարչությունների ղեկավարներ, պետական բուհերի դասախոս-պրոֆեսորներ:

Ինչպես հանդիպման բացման ասաց ազգային փոքրամասնությունների խորհրդի նախագահ Միքայել Այդինովը, Ավթանդիլ Ենուքիձեն խորհրդարան մուտք գործած առաջին ընդդիմադիրն էր, որը երկրի առջև ցուցաբերեց բարձր պատասխանատվություն, հայրենասիրություն եւ պետական մտածելակերպ:



Հանդիպմանը խորհրդարանի փոխնախագահը նշեց, որ ժամանակին աշխատել է Թբիլիսիի կոմերտշոքկոմում, պաշտոններ է զբաղեցրել ՆԳ նախարարության համակարգում, զբաղվել է գործարարությամբ: Խորհրդարան է ընտրվել «Հայրենասերների պալատ» կուսակցության ցուցակով եւ «Եվրոպական սոցիալիստներ» մոր կուսակցության ղեկավարներից մեկն է:



Նա կարող է քննադատեց ժամանակին քաղաքացիների գործարարների դեմ բռնություն ցուցաբերած գրեթե 14 միլիարդ դոլարի միջազգային պարտք կուտակած «Միասնական ազգային շարժման» ապակայունացման գործունեությունը, որն այսօր էլ համավարակի դժվար

Վասիլի Կադենցեցը, Դավա Բալտուրայցը, Ռաֆայել Աջանյանը: Նրանք ներկայացրին իրենց համայնքներին հուզող հիմնախնդիրները:

Ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհրդի նախագահ Միքայել Այդինովն առավել նշանակալի հարցերի օպերատիվ կարգավորման նպատակով, խորհրդարանում խորհրդի նախագահի պաշտոնում ներկայացրեց Ուլուզմակ Կարպուսովի թեկնածությունը: Խորհրդարանի փոխնախագահ Ավթանդիլ Ենուքիձեն խոստացավ ներգրավել խորհրդի համար նշանակալի հարցերի կարգավորման գործում, մասնավորապես՝ ազգությունների տան ստեղծմանը, որտեղ համայնքային ներկայացուցիչները կկարողանան անցկացնել ժողովներ, նշել ազգային տոները, անցկացնել համերգներ, ցուցահանդեսներ, ներկայացումներ, ուսուցանել վրացերենն ու անգլերենը, համակարգչային գործը:

Եվս մեկ ուղղությամբ ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհուրդը եւ խորհրդարանի փոխստանակը կարող են համագործակցել: Դա TV-24 հեռուստաընկերության աջակցությունն է, որտեղ ընկերության փոխտնօրեն Բադրի Նաճրեբիայի նախաձեռնությամբ ծրագրվում է կազմակերպել ազգային լեզուներով հարցումների հեռարձակում:

ԳՐՈՐԳԻ ԳՎԵՆՅԱԶԵ